

Պ. ՄԱՐԿՈՍ ԱՂԱՐԷԳԵԱՆԻՆ

Ձեր ընդարձակ յօդուածը, որ վերաբերում է Վիեննայի Մխիթարեան միաբան Հ. Գ. Գ.-ին «Հայ լրագրութեան պատմութեան» Ա. գրքին, զանազան պատճառներով չենք տպում:

Դուք ասում էք, որ Հ. Գ. Գ. իւր յիշեալ գրքում Ձեր «Կոնկան» ուղղութեան մասին կամովի վճիռ է տալիս ասելով թէ «Մ. Աղաբէգեան իւր ամսաթերթին նըպատակն և ուղղութիւնը տեղ մը որոշակի չի յայտներ»։ այն ինչ «Կոնկ» ը որոշակի ցոյց է տուել իւր ուղղութիւնը, հրատարակելով դաստիարակական, իմաստասիրական, պատմական, բանաստեղծական և այլ այնպիսի յօդուածներ, որոնց ուղղակի նպատակն էր Հայաստանեայց եկեղեցու պաշտպանութիւնը և աղգային ու բարոյական վարժացման կամ լուսաւորութեան ճաշակը տալ:

Դուք ասում էք թէ Հ. Գ. Գ. մեղադրում է ձեզ, որ Դուք օտարադաւան հայերին հայ չէք համարում. այն ինչ այդ ոչ թէ յանցանք էք համարում, այլ ձեր դաւանութիւնը. և օրինակ էք բերում նոյն իսկ «Հանդէս ամսօրեայ» ի մէջ տպուած յօդուածը հունգարիայի աղգայնոց թուի մասին, որից երևում է որ Լեհաստանում և հունգարիայում 50,000 հայեր կան, բայց պաշտօնապէս հաշուում են միայն 2695 հոգի, այսինքն միայն Լուսաւորչական հայերը. իսկ մնացեալները՝ կաթոլիկները հաշուում են լեհացիք և հունգարացիք և ոչ թէ հայեր: Օրինակ էք բերում նաև *Ջոննո Եւ Զօշուտ* գերդաստանների օտարանալը. յիշում էք «Աւետիք պատրիարք»ին, ունիթոռներին և այլն:

Սակայն այս ամենն ինչի՞ համար, բաղմայարգ պ. Մարկոս. այդ մասին շատ է խօսուել և աւելի շատ գը.

րուել. բայց ոչ նորա իրանք են համոզուել և ոչ նոցա նախնիք:

Մի մեծ գործով երախտապարտ է կացուցել միզ երկու հայ կաթողիկ վանքերի միաբանութիւնը, որ նպաստել են մեր զասական գրականութեան և հրատարակել են մեր մատենագիրները. բայց այժմ գիտութիւնը մի մեծ խնդիր ունի վճռելու՝ թէ ո՞րքան հարադատութիւն ունին այն հրատարակութիւնները, որ հայոց կրօնին են վերաբերում, վասն զի «Վարդան Բարձրբերդցուն», «Յովհան Օճնեցուն», «Կիրակոս Գանձակեցուն» և այլ պատմագիրների «տեքստի» մէջ դրուած հարցական ու զարմացականները և տարօրինակ ծանօթութիւնները զանազան կասկածների առիթ են տալիս բուն հայ մարդուն, հայ գրականութեամբ պարապողին:

Թողնենք այս ամենը ժամանակի, վաստակաւոր Մարկոս, և ս. Գրիգոր Լուսաւորչի հետ ասենք միասին իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ րան զյաւիտեանս ... » . կրկնենք միասին. — իսկ մենք սպասում ենք Հ. Հ. Մխիթարեաններից միմիայն գիտութիւն և գիտութիւն և ոչ երբէք կրօն:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԺԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ

Ներկայ համարից սկսած, իբրև յաւելում, թերթ թերթ սկսում ենք տպագրել «Լուսալ»ի մէջ Ն. Բ. Սրբ. Արիստակէս Արքեպիսկոպոս Դաւթեանի «Կանոնք ս. Ժողովոց» աշխատութիւնը, որ երկասիրողը ուղարկել է մեզ խմբագրութեանս յատուկ խնդրանքով: Առ այժմ մենք տպում ենք սեքստը նոյնութեամբ, իսկ յառաջաբանն ու կարևոր ծանօթութիւնները կտանք, երբ ամբողջ տպագրութիւնն աւարտած կլինինք: